ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ «ՀԱՅԿԱՇԵՆ» - ՈՒՄ

Օգոստոսի 26-ին Բյուրականի «Հայկաշեն» կաթողիկոսական նստավայրում հրավիրվեց Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստ՝ նախագահությամբ Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի և ատենապետությամբ Թուրքիո Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի: Նիստին մասնակցում էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ թեմական առաջնորդ Սրբազան Հայրերը:

Նիստի օրակարգի հիմնական նյութն էր առաջիկա կաթողիկոսական ընտրությունը: Այդ առիթով լսվեց և քննարկվեց ազգային-եկեղեցական ժողովի կազմակերպման հանձնախմբի կատարած աշխատանքների մասին տեղեկագիրը: Քննարկումից հետո, թեմերից ստացված հարցարանների տվյալների հիման վրա, հաստատվեց յուրաքանչյուր թեմի պատգամավորների թվաքանակը:

Նիստի ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկվեցին նաև Երևանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարի շինարարական աշխատանքների ընթացքը և ֆինանսավորման հետ կապված խնդիրները:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ